



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հունիսի 2026 թվականի № 211-Ա

ՎԱԶԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրենի 2026 թվականի մայիսի 29-ի № 15 գրությունը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն **Վաչիկ Վարդանյանի** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության փոխտնօրեն **Վարդան Մելիքյանի** վրա, մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 11-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 1
ք. Հրազդան


Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հունիսի 2026 թվականի № 212-Ա

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի № 525-Ա որոշումը և *Վարդան Վարդանյանի*՝ 2026 թվականի մայիսի 29-ի № 10-026 դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեոնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Վարդան Վարդանյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 1-ից 19-ը ներառյալ:

2. *Վարդան Վարդանյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեոնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն *Սուսաննա Նիկողոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 1
ք. Հրազդան



Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հունիսի 2026 թվականի № 213-Ա

ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, *Բաղալ Սարգսյանի*՝ 2026 թվականի հունիսի 1-ի № 36 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Բաղալ Սարգսյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 8-ից հուլիսի 10-ը ներառյալ:

2. *Բաղալ Սարգսյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Նարինե Աղասարյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 1
ք. Հրազդան


Վ. ԿԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հունիսի 2026 թվականի № 214-Ա

ՎԱԶԱԳԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը և *Վաչագան Մելքոնյանի* 2026 թվականի հունիսի 1-ի № 06/01 դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Վաչագան Մելքոնյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 15-ից 26-ը ներառյալ:

2. *Վաչագան Մելքոնյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի տեղակալ *Նվարդ Հարությունյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 2
ք. Հրազդան



ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հունիսի 2026 թվականի № 215-Ա

ԷՐԻԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Էրիկ Ավագյանի*՝ 2026 թվականի հունիսի 2-ի № 42 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ջրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Էրիկ Ավագյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 8-ից հուլիսի 10-ը ներառյալ:

2. *Էրիկ Ավագյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ջրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն *Անահիտ Մաղաթյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 3
ք. Հրազդան



Կ. ՊԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 հունիսի 2026 թվականի № 216-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 355-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի № 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արովյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունիսի 1-ի № 5 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայասրանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հասարակությունների խորհուրդների անվանական կազմը հասարակելու մասին» № 355-Ա որոշման № 2 հավելվածի 7-րդ կետում «Սամվել Մարգարյան» բառերը փոխարինել «Մերաքսե Խաչատրյան» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արովյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 4
ք. Հրազդան



Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հունիսի 2026 թվականի № 218-Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Հարություն Գրիգորյանի*՝ 2026 թվականի հունիսի 4-ի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Հարություն Գրիգորյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 8-ից 19-ը ներառյալ:

2. *Հարություն Գրիգորյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ *Լուիզա Միմնյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

2026 թվականի հունիսի 5
ք. Հրազդան



Գ. ԳԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2026 թվականի № 221-Ա

ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Զորիկ Խղաթյանի* 2026 թվականի հունիսի 5-ի № 23 դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քարաշամբի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Զորիկ Խղաթյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 15-ից 26-ը ներառյալ:

2. *Զորիկ Խղաթյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քարաշամբի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Մարիա Գևորգյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 8
ք. Հրազդան


Ա. ԱՆՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 222-Ա

ՆԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի № 525-Ա որոշումը և *Նարինե Աբրահամյանի*՝ 2026 թվականի հունիսի 9-ի № 84 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Նարինե Աբրահամյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 15-ից հուլիսի 17-ը ներառյալ:

2. *Նարինե Աբրահամյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրեն *Անուշ Ասանյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան



Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 223-Ա

ՆԱՐԻՆԵ ԱՂԱՍԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՀՐԱԳՂԱՆԻ ՎԻՋԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի № 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 1-ի № 745 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. **Նարինե Աբրահամի Աղասարյանին** 2026 թվականի հունիսի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի մայիսի 8-ի «Քնքուշ Լևոնյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին» № 203-Ա որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան


Ա. ՄԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 224-Ա

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱՔՈՎՅԱՆԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի № 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 1-ի № 744 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. **Գոհար Ռոբերտի Վարդանյանին** 2026 թվականի հունիսի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արուլյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 10-ի «Մարգարիտա Հարությունյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արուլյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին» № 448-Ա որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան

ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 225-Ա

**ԱՄԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ «ԶԱՌԻ Ժ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը և *Ամայյա Հովհաննիսյանի* 2026 թվականի հունիսի 9-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. *Ամայյա Լևուշի Հովհաննիսյանին* 2026 թվականի հունիսի 10-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2025 թվականի հուլիսի 8-ին կնքված № 42 աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան


Ո. ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 226-Ա

ԱՄԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԶԱՌԻ Ժ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի № 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի № 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 1-ի № 743 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի հունիսի 9-ի № 225-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. *Ամալյա Լևուշի Հովհաննիսյանին* 2026 թվականի հունիսի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հուլիսի 8-ի «Ամալյա Հովհաննիսյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին» № 263-Ա որոշման 2-րդ կետը:

3. Մինչև վարչատնտեսական մասի համակարգողի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել *Ամալյա Լևուշի Հովհաննիսյանին:*

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի

մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան**

**Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 227-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի № 530-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2026 թվականի հունիսի 9-ի № 270-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի հասարիքացուցակը հաստատելու մասին» № 530-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման հավելվածը՝ (հասարիքացուցակը) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան



Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2026 թվականի հունիսի 9-ի № 227-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի № 530-Ա որոշման



ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2026
ԹՎԱԿԱՆԻ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների թիվը
Վարչական պաշտոններ		
1	Մարզպետ	1
2	Մարզպետի տեղակալ	1
3	Մարզպետի տեղակալ	1
Ընդամենը		3 հաստիք (պաշտոն)
Հայեցողական պաշտոններ		
4	Մարզպետի խորհրդական	1
5	Մարզպետի խորհրդական	1
6	Մարզպետի խորհրդական	1
7	Մարզպետի օգնական	1
8	Մարզպետի օգնական	1
9	Մարզպետի տեղակալի օգնական	1
10	Մարզպետի տեղակալի օգնական	1
Ընդամենը		7 հաստիք (պաշտոն)
Քաղաքացիական ծառայության պաշտոններ և քաղաքացիական աշխատանք կատարող		
Հ/Հ	Ստորաբաժանման և պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը (Հաստիքների թիվը)
11	Գլխավոր քարտուղար	96-Ղ2-1
12	Գլխավոր քարտուղարի օգնական	1
Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ		
Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն		
13	Վարչության պետ	96-30.1-Ղ4-1
14	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-1
15	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-2
16	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-3
17	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-4
18	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-5
19	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-7
20	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-8
Հողաշինության բաժին		
21	Բաժնի պետ	96-30.1-Ղ5-1
22	Բաժնի գլխավոր մասնագետ	96-30.1-Մ2-6
23	Բաժնի մասնագետ	96-30.1-Մ6-1
Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն		
24	Վարչության պետ	96-30.2-Ղ4-1
25	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.2-Մ2-1
26	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.2-Մ2-2
27	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.2-Մ2-3
28	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.2-Մ2-4
29	Վարչության ավագ մասնագետ	96-30.2-Մ3-2
30	Վարչության ավագ մասնագետ	96-30.2-Մ3-4
31	Վարչության ավագ մասնագետ	96-30.2-Մ3-6

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն		
32	Վարչության պետ	96-30.3-Ղ4-1
33	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.3-Մ2-1
34	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.3-Մ2-2
35	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.3-Մ2-3
36	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.3-Մ2-4
Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն		
37	Վարչության պետ	96-30.4-Ղ4-1
38	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.4-Մ2-1
39	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.4-Մ2-2
40	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.4-Մ2-3
41	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.4-Մ2-4
42	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.4-Մ2-5
43	Վարչության ավագ մասնագետ	96-30.4-Մ3-1
Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին		
44	Բաժնի պետ	96-30.5-Ղ4-1
45	Բաժնի գլխավոր մասնագետ	96-30.5-Մ2-1
46	Բաժնի ավագ մասնագետ	96-30.5-Մ3-1
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն		
47	Վարչության պետ	96-30.6-Ղ4-1
48	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.6-Մ2-1
49	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.6-Մ2-2
50	Վարչության գլխավոր մասնագետ	96-30.6-Մ2-3
51	Վարչության ավագ մասնագետ	96-30.6-Մ3-1
Զորահավաքային նախապատրաստության բաժին		
52	Բաժնի պետ	96-30.7-Ղ4-1
53	Բաժնի գլխավոր մասնագետ	96-30.7-Մ2-1
Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ		
Ֆինանսական վարչություն		
54	Վարչության պետ	96-31.1-Ղ4-1
55	Վարչության գլխավոր մասնագետ	96-31.1-Մ2-1
56	Վարչության գլխավոր մասնագետ	96-31.1-Մ2-3
57	Վարչության մասնագետ	96-31.1-Մ6-1
Հաշվապահական հաշվառման բաժին		
58	Բաժնի պետ-գլխավոր հաշվապահ	96-31.1-Ղ5-1
59	Բաժնի գլխավոր մասնագետ	96-31.1-Մ2-2
60	Բաժնի ավագ մասնագետ	96-31.1-Մ4-1
Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն		
61	Վարչության պետ	96-31.2-Ղ4-1
62	Վարչության գլխավոր մասնագետ	96-31.2-Մ2-1
63	Վարչության գլխավոր մասնագետ	96-31.2-Մ2-2
64	Վարչության գլխավոր մասնագետ	96-31.2-Մ2-3
65	Վարչության ավագ մասնագետ	96-31.2-Մ3-2
Անձնակազմի կառավարման բաժին		
66	Բաժնի պետ	96-31.2-Ղ5-1
67	Բաժնի բարեկարգության հարցերով կազմակերպիչ	96-31.2-Մ2-4
68	Բաժնի ավագ մասնագետ	96-31.2-Մ3-4
Փաստաթղթաշրջանառության բաժին		
69	Բաժնի պետ	96-31.2-Ղ5-2
70	Բաժնի ավագ մասնագետ	96-31.2-Մ3-5
71	Բաժնի ավագ մասնագետ	96-31.2-Մ3-6
72	Բաժնի ավագ մասնագետ	96-31.2-Մ3-7
Իրավաբանական բաժին		
73	Բաժնի պետ	96-31.3-Ղ4-1
74	Բաժնի գլխավոր իրավաբան	96-31.3-Մ2-1

75	Բաժնի ավագ իրավաբան	96-31.3-Մ3-1
Ընդամենը		65 հաստիք (պաշտոն)
Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների թիվը
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ		
76	Վարորդ	1
77	Հավաքարար	1
78	Հավաքարար	1
79	Հավաքարար	1
80	Բանվոր՝ շենքերի, կառույցների և սարքավորումների սպասարկման ու ընթացիկ նորոգման	1
81	Օպերատոր	1
Ընդամենը		6 հաստիք
Ընդամենը		81 հաստիք (պաշտոն)

»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2026 թվականի № 228-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի № 531-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2026 թվականի հունիսի 9-ի № 227-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի աշխատողների 2026 թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 531-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման հավելվածը՝ (պաշտոնային դրույքաչափերը) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 9
ք. Հրազդան



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2026 թվականի № 229-Ա

ՎԱՍԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասի և հիմք ընդունելով *Վասակ Վարդանյանի* 2026 թվականի հունիսի 9-ի № Ն/739-2026 դիմումը՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վասակ Վարդանյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 11-ից 24-ը ներառյալ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 10
ք. Հրազդան



Ա. ՄԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2026 թվականի № 230-Ա

ՎԱՀԵ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասի և հիմք ընդունելով *Վահե Ներսիսյանի* 2026 թվականի հունիսի 9-ի № Ն/747-2026 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վասակ Վարդանյանի* օգնական *Վահե Ներսիսյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 11-ից 24-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 10
ք. Հրազդան



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2026 թվականի № 231-Ա

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2026 թվականի հունիսի 10-ի № 02/09.2/19817-2026 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ **Հայկ Մկրտչյանին** 2026 թվականի հունիսի 18-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխմանը վերաբերյալ քննարկմանը մասնակցելու համար:

2. **Հայկ Մկրտչյանի** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված «**TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 L**» մակնիշի **467 HS 61** ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (*հաշվապահական հաշվառման բաժնին*) գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 11
ք. Հրազդան



ՈՍԿԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2026 թվականի № 232-Ա

ՄԵՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Մերութան Մուրադյանի* 2026 թվականի հունիսի 11-ի № 30 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կարենիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Մերութան Մուրադյանին* տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 12-ից հուլիսի 16-ը ներառյալ:

2. *Մերութան Մուրադյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կարենիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Հասմիկ Աբրահամյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 12
ք. Հրազդան



Ա. ՄԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունիսի 2026 թվականի № 233-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 15-ի № 494-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. *Օֆեյյա Գուրգենի Թորոսյանին* 2026 թվականի հունիսի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. *Օֆեյյա Գուրգենի Թորոսյանին* 2026 թվականի հունիսի 15-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (*տնօրենի թափուր պաշտոնում*) պաշտոնի նշանակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 15
ք. Հրազդան



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2026 թվականի № 234-Ա

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի № 1550-Լ որոշման № 6 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետի և հիմք ընդունելով *Հասմիկ Ղազարյանի*՝ 2026 թվականի հունիսի 15-ի № Ն/761-2026 դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական *Հասմիկ Սամվելի Ղազարյանին* 2026 թվականի հունիսի 16-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել նրա գործավարությանը հանձնված նյութերի և օգտագործմանը տրամադրված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 16
ք. Հրազդան


Ա. ՄԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2026 թվականի № 235-Ա

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի № 1550-Լ որոշման № 6 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետի և հիմք ընդունելով *Հասմիկ Ղազարյանի*՝ 2026 թվականի հունիսի 15-ի դիմումը՝ **որոշում եմ**.

1. *Հասմիկ Սամվելի Ղազարյանին* 2026 թվականի հունիսի 16-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական:


Աշխատավարձը՝ **395 200** (երեք հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել նրա գործավարությանը հանձնվող նյութերի և օգտագործմանը տրամադրվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 16
ք. Հրազդան

 Ա. ՅԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2026 թվականի № 236-Ա

ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի՝ 2026 թվականի հունիսի 17-ի № Ն/773-2026 գեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական **Սյրելիան Բաղդասարյանին** 2026 թվականի հունիսի 18-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճընի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց», «Կարենիսի միջնակարգ դպրոց» և «Արտավազի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի հավակնորդների հետ հարցազրույց անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (*հաշվապահական հաշվառման բաժին*) գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 17
ք. Հրազդան


Ս. ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2026 թվականի № 237-Ա

ԱՆՆԱ ՄՈՒՐԱՊՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը, *Աննա Մուրադյանի*՝ 2026 թվականի մայիսի 16-ի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճրնի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող *Աննա Մուրադյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից 17 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 18-ից հուլիսի 10-ը ներառյալ:

2. *Աննա Մուրադյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Հաճրնի Մեծն Մուրադի անվան № 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Միմա Ղափադյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026 թվականի հունիսի 17
ք. Հրազդան

 Ա. ԾԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2026 թվականի № 238-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Ռուզաննա Ավայյանի*՝ 2026 թվականի հունիսի 12-ի № 8 դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Ռուզաննա Ավայյանին* տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2026 թվականի հունիսի 19-ից հուլիսի 2-ը ներառյալ:

2. *Ռուզաննա Ավայյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ *Գոհար Մկրտչյանի* վրա:

